

ԿԱՐԾԻՔ

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՐԱՏԻ ԵՍԱՅԱՆԻ

«ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՎՈՒՇ ԵՎ ԶԱԿԱՍ ԳԱՎԱՌՆԵՐԸ XVII Դ. -

XVIII Դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ (ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ

Է.00.01 «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի տարբեր հատվածների պատմաժողովրդագրական ուսումնասիրությունները ներկայումս հույժ կարևորված են հատկապես լայն թափ առած պատմակեղծարարությանը գիտականորեն հիմնավոր պատասխաններ տալու անհրաժեշտությունից դրդված և դրանց սնանկությունն ապացուցելու հրատապության պատճառով: Թեև իրականում Հայաստանի պատմությանն ու ժողովրդագրությանն առնչվող հետազոտությունները նախևառաջ պահանջված են հենց Հայոց պատմության տարբեր հիմնահարցերի խորքային և ամբողջական ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտությամբ, սակայն վերոհիշյալը շատ հաճախ դառնում է նորանոր ուսումնասիրությունների իրականացման պատճառ:

Նշված առումներով խիստ կարևորված է Հայաստանի տարբեր գավառների պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը, հատկապես մեծ փոփոխություններով լեցուն XVII-XVIII դդ. վերաբերյալ, ուստի ողջունելի է Ա. Եսայանի «Հյուսիսարևելյան Հայաստանի Տավուշ և Զակամ գավառները XVII դ. - XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» թեմայով ատենախոսության ի հայտ գալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հեղինակը հստակորեն ներկայացնում է թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հիմնավորում

ընտրված ժամանակագրական շրջանակը, վերլուծում թեմային առնչվող սկզբնաղբյուրային և վերլուծական գրականությունը:

Ատենախոսության առաջին գլխում («Իրավիճակը հյուսիսարևելյան Հայաստանում XVI դ. վերջին – XVII դ. սկզբներին») հեղինակն անդրադարձել է հյուսիսարևելյան Հայաստանում XVI դ. թուրք-պարսկական պատերազմների հետևանքներին, խնդրո առարկա գավառներում տիրող իրավիճակին Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի շրջանում, ինչպես նաև հյուսիսարևելյան Հայաստանում օտար էթնիկ տարրի հաստատմանը: Նշված խնդիրներից յուրաքանչյուրին հեղինակը հատկացրել է առանձին ենթավերնագիր՝ խորությամբ քննելու նպատակադրումով:

Հատկապես շահեկան է առաջին գլխի երկրորդ («Տավուշ և Զակամ գավառները շահաբասյան բռնագաղթի տարիներին») և երրորդ («Օտար էթնիկ տարրի բնակեցումը հյուսիսարևելյան Հայաստանում») ենթագլուխներում ներկայացվածը, քանի որ Շահ Աբասի բռնագաղթն էր, որ հնարավորություն տվեց օտար էթնիկ տարրին ներթափանցելու և հաստատվելու խնդրո առարկա գավառներում:

Ատենախոսության երկրորդ գլխում («Տավուշ և Զակամ գավառները (1606-1725)») հեղինակը քննության է առել Տավուշում և Զակամում գոյություն ունեցող մելիքությունների պատմությունը, XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին հյուսիսարևելյան Հայաստանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը, ինչպես նաև անդրադարձել Այսրկովկասում թուրքական նվաճումներին: Կարևոր է Տավուշի և Զակամի մելիքությունների քննությունը, քանի որ այն պարունակում է զգալի նորություններ խնդրո առարկա գավառների պատմության ուսումնասիրության առումով:

Ատենախոսության երրորդ գլուխը («Տավուշ և Զակամ գավառների ժողովրդագրական ու տնտեսական պատկերն ըստ օսմանյան 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի») մանրակրկիտ տեղեկություններ է պարունակում խնդրո առարկա տարածաշրջանի տարբեր հատվածներում տիրող իրավիճակի վերաբերյալ: «Դաֆթարի» տվյալները, որոնք մասնակիորեն վերլուծված են հեղինակի կողմից, հետազայում անհրաժեշտ կլինի շարունակաբար հետազոտել՝ բխեցնելով բազմաբնույթ եզրակացություններ Տավուշ ու Զակամ գավառների տարածքին առնչվող գործընթացների վերաբերյալ: Արժեքավոր է հեղինակի

քննությունը խնդրո առարկա գավառների հայկական և մահմեդական բնակավայրերի վերաբերյալ:

Ատենախոսության չորրորդ գլխում («Հոգևոր-մշակութային կյանքը Զակամ և Տավուշ գավառներում XVII դ. - XVIII դ. առաջին քառորդին») հեղինակն առանձնաբար ներկայացրել է նշված գավառների հոգևոր-մշակութային կյանքի դրսևորումները, ինչը կարևոր է՝ հաշվի առնելով խնդրո առարկա ժամանակաշրջանում տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական բարդ գործընթացները, պարսկական և թուրքական բանակների գորաշարժերը և օտար տարրի ներթափանցումը, որոնք անչափ բարդացնում էին հոգևոր-մշակութային կյանքի զարգացումը: Հեղինակը ցույց է տվել, որ, չնայած նշված՝ հոգևոր-մշակութային կյանքն արգելակող գործընթացների, գավառների հայության հոգևոր-մշակութային կյանքում տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է իր եզրակացությունները՝ փորձելով հնարավորինս հիմնավոր ներկայացնել հետազոտության արդյունքները: Ա. Եսայանի եզրակացությունները բխում են հեղինակային վերլուծությունից, հիմնավորված են և ընդունելի:

Անհրաժեշտ է նշել, որ ատենախոսության՝ հեղինակի օգտագործած աղբյուրային հենքը լիովին բավարար է արդյունավետ և բովանդակային վերլուծություն կատարելու համար:

Հեղինակն ըստ անհրաժեշտության անդրադարձել է նաև տարբեր հետազոտողների տեսակետներին, քննարկել դրանք՝ տեքստը օժտելով բոլոր անհրաժեշտ հղումներով:

Ատենախոսության մեջ հեղինակի կատարած քննությունն ու արտահայտած կարծիքները հիմնավոր են և օբյեկտիվ: Հեղինակը հանդես է բերել աղբյուրային և վերլուծական գրականության հետ աշխատելու հմտություններ, գիտական աշխատանք կատարելու էական ընդունակություններ, խնդիրներ սահմանելու և դրանք հետևողականորեն լուծելու կարողություններ, որի արդյունքում մասնագիտական խորհրդի դատին է հանձնվում կարևոր և արդյունավետ գիտական աշխատություն:

\*\*\*

Ա. Եսայանի ատենախոսության վերաբերյալ իմ լիովին դրական կարծիքին զուգահեռ ներկայացնում եմ նաև մի քանի դիտողություններ:

1. Առաջին դիտողությունս վերաբերում է ատենախոսության մեջ օգտագործված հասկացություններին և անվանաձևերին:

- Հեղինակն օգտագործում է «շահաբաայան բոնագաղթ» արտահայտությունը /էջ 2, 16/, որը ավելի ճիշտ կլիներ ձևակերպել «Շահ Աբասի հրամանով իրականացված/կազմակերպված բոնագաղթ» ձևով: Մեկ այլ պարագայում նա խոսում է «շահաբաայան արշավանքների» մասին /էջ 37/:
- Հեղինակն օգտագործում է «Հարավային Կովկաս» /էջ 2, 43/ («նաև հարավկովկասյան տարածաշրջան» /էջ 37/) անվանումը, որի փոխարեն հայագիտական հետազոտություններում որպես կանոն օգտագործվում է «Այսրկովկաս» անվանումը: Ճիշտ է՝ «Այսրկովկաս» անվանաձևը բխեցվել է ցարական շրջանում տարածաշրջանին տրվող «Անդրկովկաս» ձևից՝ տարածաշրջանն անվանակոչողների դիտակետի տրամաբանությամբ, ուստի ևս չի կարող դիտվել վերջնական ու հիմնական անվանաձև, սակայն այն ավելի ընդունելի է, քան «Հարավային Կովկաս» անվանումը, որը հետխորհրդային շրջանի ծնունդ է և արհեստական, քանի որ Կովկասյան լեռներից հարավ գտնվող տարածաշրջանը Կովկասի մաս չէ և Հարավային Կովկաս կոչվել չի կարող առնվազն անցյալի իրողությունները ներկայացնելիս: Հեղինակը նաև պետք է փորձեր հիմնավորել տարածաշրջանի անվանման իր ընտրությունը:
- Հեղինակը խնդրո առարկա ժամանակաշրջանի իրադարձությունները ներկայացնելիս օգտագործում է «Օսմանյան Թուրքիա» /էջ 6, 13, 14 և այլն/ կամ նույնիսկ «Թուրքիա» /էջ 14/ անվանումը, որի փոխարեն ավելի ճիշտ կլիներ «Օսմանյան կայսրություն» կամ «Օսմանյան պետություն/տերություն» ձևը: Ի դեպ, առաջարկաձև անավանումներից առաջինը նա երբեմն օգտագործում է ատենախոսության էջերում:
- Իր ատենախոսության համար հենքային սկզբնաղբյուրների անվանումը հեղինակը ներկայացնում է «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի համառոտ / ընդարձակ դաֆթար» անվանումով /էջ 8, 15, 47 և այլն/, նույն կերպ

ներկայացնում նաև համանուն բեկլարբեկությունը /էջ 12, 26/, փաստորեն, դրա առաջին բաղադրիչը բերելով հայահունչ, իսկ երկրորդը օտարահունչ ձևով, թեև աղբյուրի անվան մեջ նշված են օտարահունչ «Գենջե-Քարաբաղ» անվանաձևերը: Ստացվում է, որ անվանումներից մեկը հեղինակն անհրաժեշտ է համարել ներկայացնել բնիկ հայկական ձևով, իսկ մյուսը՝ ոչ: Ճիշտ է՝ լիովին հայահունչ «Գանձակ-Արցախի էյալեթ» ձևը գուցե բռնազբոսիկ կհնչեր, սակայն հեղինակը պետք է փորձեր հիմնավորել անվանաձևերի ներկայացման իր մոտեցումները:

- Ա. Եսայանը զուգահեռաբար օգտագործում է միևնույն երկրի տարբեր անվանումներ, օրինակ՝ էջ 18-ում օգտագործում է թե՛ Իրան («Քշվում է ... դեպի Իրան») և թե՛ Պարսկաստան («Պարսկաստան էր տեղափոխվել...») անվանումները, մինչդեռ անհարժեշտ էր օգտագործել միայն մեկ՝ դարաշրջանի իրողություններն արտացոլող անվանում:
- 2. Հեղինակը Տավուշ և Զակամ գավառների՝ խիստ համառոտ պատմաաշխարհագրական նկարագիրը տվել է ատենախոսության ներածության առաջին պարբերության մեջ /էջ 4/ և էջ 5-ում, մինչդեռ ավելի ընդարձակն նկարագրությամբ անհրաժեշտ էր գավառների տեղադրությունը ներկայացնել առաջին գլխում:
- 3. Ատենախոսության երկրորդ գլխի անվանումը՝ «Տավուշ և Զակամ գավառները (1606-1725)» /էջ 2, 30/, ցանկալի կլիներ տեսնել ավելի հստակ և արտահայտիչ ձևակերպմամբ: Այլապես տպավորություն է, որ հեղինակը պատրաստվում է անդրադառնալ գավառներին առնչվող բոլոր իրողություններին 1606-1725 թթ. շրջանում, մինչդեռ անդրադարձել է միայն իր ատենախոսության թեմատիկ ուղղությանը վերաբերող հիմնահարցերին:
- 4. Ատենախոսության երրորդ գլուխն ամփոփում չունի, մինչդեռ այնտեղ ներկայացված նյութի ուսումնասիրության արդյունքներն ի մի բերելու և ամփոփ ներկայացնելու անհրաժեշտություն զգացվում է:
- 5. Հեղինակը երբեմն քննական մոտեցում չի ցուցաբերում այլ հեղինակների կարծիքները մեջբերելիս: Մասնավորապես էջ 17-ում, խոսելով Գանձակի

մոտակա հայկական բնակավայրերում մասնակի կոտորած կազմակերպելու պարսիկների շարժառիթների մասին, նա ներկայացնում է Մ. Մալխասյանի ենթադրությունը, ըստ որի՝ դա կարող էր լինել այն բանի հետևանքը, որ տեղացիները դիմադրության փորձ էին արել: Այնուհետև, սակայն, ատենախոսը չի ներկայացնում իր վերաբերմունքն այդ ենթադրությանը, համաձայն է արդյոք դրան, թե՞ ոչ:

6. Հեղինակը երբեմն թերագնահատում է իր մեջբերած աղբյուրային տեղեկությունները: Օրինակ, խոսելով Տավուշի և Ջակամի հայկական մելիքությունների գոյությունը հիմնավորող տեղեկությունների մասին, դրանցից մեկի վերաբերյալ գրում է, որ այն «անուղղակի» վկայություն է Տավուշի մելիքության մասին /էջ 32/: Մինչդեռ այնտեղ հստակորեն գրված է «...Թաուզայ երկրիս մելիք Ղորխմազի...» մասին /էջ 33/, որն ուղղակի և ոչ թե անուղղակի վկայություն է Տավուշի մելիքության գոյության վերաբերյալ:
7. Ատենախոսության 52-59, 65-71, 76-78, 80-91 էջերում հեղինակը ներկայացնում է հայկական գյուղերի հարկատուների ամբողջական անվանական ցուցակները՝ նպատակ ունենալով հիմնավորել դրանց հայաբնակ լինելը, նաև հավելելով որոշակի տեղեկություններ հայկական բնակավայրերի վերաբերյալ: Կարծում եմ, սակայն, որ այդ անվանացանկերը, եթե դրանց ներկայացնելը համարվել է հատկապես անհրաժեշտ, հետազոտական տեքստը չծանրաբեռնելու նպատակով կարելի էր տեղադրել ատենախոսության հավելվածում, առավել ևս, որ հեղինակը անվանացանկը շարադրելուց հետո հետազոտական արդյունքներ չի ներկայացնում, ինչպես, օրինակ՝ որոշակի ընդհանրացումներ այն մասին, թե քանի ընտանիք կար առանձին գյուղում, գյուղախմբեր կայի՞ն, թե՞ ոչ և այլն:
8. Չորրորդ գլխի ենթագլուխների դասավորվածությունը հարց է առաջացնում. եթե ողջ ատենախոսության մեջ մշտապես սկզբում ներկայացվում են Տավուշ, հետո միայն Ջակամ գավառների վերաբերյալ տեղեկություններ և հետազոտական արդյունքներ, ապա ինչու նույն ձևով չի արվել չորրորդ գլխի պարագայում, որտեղ սկզբում ներկայացված է

Զակամ գավառի, հետո միայն Տավուշ գավառի հոգևոր մշակութային կյանքը: Առավել ևս, որ Զակամ գավառի հոգևոր մշակութային կյանքի վերաբերյալ տեղեկությունները կցկտուր են, իսկ Տավուշ գավառի վերաբերյալ՝ լիովին բավարար՝ խորքային ուսումնասիրություն ներկայացնելու համար: Ատենախոսը հետագայում թերևս հենց այսպես էլ պետք է վարվի:

\*\*\*

Նշված դիտողություններն էականորեն չեն ազդում ատենախոսության արժանիքների վրա: Դրանք ատենախոսին օգտակար կլինեն հետագա ուսումնասիրություններում:

Ա. Եսայանը կատարել է ուշագրավ աշխատանք, որտեղ ակնհայտ է բանիմաց ղեկավարի խորհուրդը, իր՝ հեղինակի խոսքը, նրա վերլուծական միտքը:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, հեղինակի հրատարակած հոդվածներն էլ արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

\*\*\*

«Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակված աշխատանքները, ներկայացնում եմ հետևյալը.

1. հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են գլուխների բովանդակությունը,
2. ատենախոսության թեման արդիական է,
3. ատենախոսության մեջ առկա դրույթներն և եզրահանգումները հեղինակային են, իսկ փոխառված մտքերն ու դիտարկումները՝ պարտադիր հղված,

4. ատենախոսության մեջ քննարկված թեմատիկան, ներկայացված դրույթներն ու եզրահանգումները նոր և հիմնավոր են:

Այսպիսով՝ Անդրանիկ Արարատի Եսայանի «Հյուսիսարևելյան Հայաստանի Տավուշ և Զակամ գավառները XVII դ. - XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» վերնագրով Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետին, գնահատվում է իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում:

Ասվածի հիմքով համարում եմ, որ Անդրանիկ Արարատի Եսայանն արժանի է իր հայցած՝ Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պ.գ.դ. Արման Սամվելի Եղիազարյան



Պ.գ.դ. Ա. Ս. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, պ.գ.թ. Մ. Վ. Հովհաննիսյան



02.10.2024 թ.